Luys Lույս®

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ - 2023

Հաշվետվություն Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից հրապարակված՝ Համաշխարհային գենդերային անհավասարության զեկույցի (2024թ.) վերաբերյալ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....1

1. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....3

2. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ.....5

2.1. Համաշխարհային միտումներն ու արդյունքները.....5

2.2. Գենդերային անհավասարությունն աշխարհի տարբեր հատվածներում.....6

3. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.....9

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.....13

ԱՄՓՈՓՈՒՄ.....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գենդերային անհավասարության հիմնախնդիրը պարզապես սեռային խտրականության դրսևորման պատճառով կանանց իրավունքների ոտնահարման հարց չէ, քանի որ, կանանց վրա բացասական ազդեցությունից բացի, այն նաև «մակրոմակարդակի» լուրջ ռիսկեր է պարունակում տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական հարթություններում: Մասնավորապես, այն չափազանց վտանգավոր է երկրի տնտեսության ու հասարակության ապագայի համար, քանի որ գենդերային անհավասարության դեպքում երկիրը բախվում է մարդկային կապիտալի թերօգտագործման խնդրի հետ, ինչը երկարաժամկետում կարող է հանգեցնել մրցունակության ու պոտենցիալի կորստի:

Գենդերային անհավասարությունը տարբեր ձևերով ու խորությամբ դրսևորվում է ամբողջ աշխարհում և շատ հաճախ ունի պատմական, էթնիկ, կրոնական և մշակութային արմատներ: Դրա հաղթահարումը ենթադրում է հասարակական կյանքի բոլոր օղակների ու մակարդակների համատեղ ու ներդաշնակեցված ջանքեր՝ սկսած քաղաքական ու իրավական բարեփոխումներից մինչև մշակութային փոփոխություններին ուղղված արդյունավետ քարոզչություն: Այն միանշանակ կնպաստի սոցիալական արդարության, տնտեսական զարգացման և հասարակության անդամների ընդհանուր բարեկեցության աճին: Այդ իսկ պատճառով, աշխարհի երկրների մեծ մասում գենդերային անհավասարության հաղթահարումը հանդիսանում է իշխանության առաջնային խնդիրներից մեկը: Այդ նպատակով շատ երկրներում պարբերաբար իրականացվում են տարբեր գիտագործնական ուսումնասիրություններ, որոնք միտված են գենդերային հավասարության ապահովման հիմնական խոչընդոտների բացահայտմանը և դրանց հաղթահարման ուղիների նախանշմանը: Այնուամենայնիվ, նկատի ունենալով, որ վերջին տասնամյակների գլոբալ զարգացումների արդյունքում գենդերային անհավասարության հիմնախնդիրը դուրս է եկել առանձին երկրների ազգային սահմաններից և ստացել համաշխարհային բնույթ, դրա վերհանման, գնահատման և լուծման ուղիների առաջարկման համար միայն առանձին երկրի սահմաններում կատարված հետազոտությունները բավարար չեն: Ուստի, նշված հարցերի, ինչպես նաև միջերկրային ու միջժամանակային համեմատություններ կատարելու համար առանձնակի կարևորություն ունեն միջազգային տարբեր հեղինակավոր կազմակերպությունների վերլուծությունները, որոնց շարքում առավել հայտնիներից են Համաշխարհային տնտեսական համաժողովի (ՀՏՀ) կողմից 2006 թվականից ի վեր հրապարակվող Համաշխարհային գենդերային անհավասարության ամենամյա զեկույցները:

Դրանցում ներկայացվում է **Համաշխարհային գենդերային անհավասարության ինդեքսը** (**ՀԳԱ ինդեքս**), որով գնահատվում են գենդերային հավասարության ասպարեզում տարբեր երկրներում և տարածաշրջաններում նախորդ տարում արձանագրված զարգացումները: Զեկույցը, բացի նրանից, որ լայն գործիքակազմ է ապահովում միջազգային և տարածաշրջանային համադրումների համար, նաև երկրների իշխանությունների համար գենդերային անհավասարության հարցերի շրջանակում տարատեսակ վերլուծությունների իրականացման մեթոդաբանական և տեղեկատվական հիմք է հանդիսանում: Դա նկատի ունենալով՝ ՀՏՀ Համաշխարհային գենդերային անհավասարության զեկույցը շատ հաճախ դիտարկվում է որպես գենդերային անհավասարության հաղթահարմանը միտված արդյունավետ քաղաքականության մշակման և իրականացման յուրահատուկ ուղեցույց:

Օրերս հրապարակվել է ՀՏՀ-ի «Համաշխարհային գենդերային անհավասարության զեկույց - 2024»-ը[1] (այսուհետ՝ Զեկույց), որում ներկայացված է 146 երկիր: Դրանցից, 101-ի համար ՀԳԱ ինդեքսը մշտապես (2006 թվականից ի վեր) հաշվարկվել է: Նախորդ տարվա համեմատ 2024 թվականի Զեկույցում ավելացել և չի ընդգրկվել երեքական երկիր:

Զեկույցում աշխարհի երկրները խմբավորված են 8 տարածաշրջանային խմբերում՝ *«Եվրոպա», «Հյուսիսային Ամերիկա», «Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազանի երկրներ», «Կենտրոնական Ասիա», «Ենթասահարական Աֆրիկա», «Արևելյան Ասիա և խաղաղօվկիանոսյան երկրներ», «Հարավային Ասիա», «Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա»*: Հայաստանն ընդգրկված է *«Կենտրոնական Ասիա»* խմբում և զեկույցներում ներառված է 2007 թվականից: Հարկ է նշել, որ այս անգամ էլ Հայաստանը ներառող տարածաշրջանային խումբը թե՛ անվանման և թե՛ կառուցվածքի առումով փոփոխվել է: Մասնավորապես, 2023-ի զեկույցում խումբը կոչվում էր *«Եվրասիա և Կենտրոնական Ասիա»* և ներառում էր 10 երկիր, իսկ այս տարվա զեկույցում մեր տարածաշրջանային խումբը ներառում է 7 երկիր: Անցյալ տարվա զեկույցում Հայաստանի անցյալ տարվա խմբակից երկրներից չորսը՝ Մոլդովան, Բելառուսը, Ուկրաինան և Թուրքիան, այս տարի ներառվել են *«Եվրոպա»* խմբում: Ուզբեկստանը նախորդ զեկույցում ներառված չի եղել:

[1] Ամբողջական զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2024.pdf:

Կարևորելով զեկույցների շարքի դերը՝ «Լույս» հիմնադրամը յուրաքանչյուր ամենամյա զեկույցի հրապարակումից հետո կատարում է դրա վերաբերյալ վերլուծություն[2]:

Սույն հաշվետվության սկզբում հակիրճ նկարագրված են ՀԳԱ ինդեքսը և դրա հաշվարկման մեթոդաբանությունը: Այնուհետև անդրադարձ է կատարված Զեկույցի՝ աշխարհին վերաբերող առավել ուշագրավ տեղեկատվությանը: Հաջորդիվ վերլուծված է դրանում ներառված՝ Հայաստանին վերաբերող տեղեկատվությունը: Հաշվետվության հաջորդ մասը նվիրված է Հայաստանի և որոշ երկրների տարածաշրջանային համադրումներին: Վերջում ամփոփված են կարևոր արդյունքներն ու եզրահանգումները:

1. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Համաշխարհային գենդերային անհավասարության ինդեքսի հաշվարկման համար օգտագործվում է 4 ենթաինդեքս՝

1) Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ,

2) Կրթության ձեռքբերում,

3) Առողջություն և կյանքի տևողություն,

4) Քաղաքական մասնակցություն:

«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ» ենթաինդեքսը հաշվարկվում է հինգ ցուցիչների հիման վրա՝ *«Աշխատուժի մասնակցության մակարդակ», «Միատեսակ աշխատանքների վարձատրությունների հավասարություն», «Վաստակած եկամուտ», «Օրենսդիր համակարգում, բարձրաստիճան և ղեկավար պաշտոններում զբաղվածություն»* և *«Մասնագիտական և տեխնիկական աշխատանքներում զբաղվածություն»:*

«Կրթության ձեռքբերում» ենթաինդեքսը, որն արտացոլում է կանանց և տղամարդկանց միջև կրթության հասանելիության անհավասարության աստիճանը (այսուհետ՝ նաև գենդերային ճեղքվածք) և հաշվարկվում է չորս ցուցիչների հիման վրա՝ *«Գրագիտության մակարդակ», «Տարրական կրթական համակարգում ներգրավվածություն», «Միջնակարգ կրթական համակարգում ներգրավվածություն»* և *«Բարձրագույն կրթական համակարգում ներգրավվածություն»*:

«Առողջություն և կյանքի տևողություն» ենթաինդեքսը գենդերային ճեղքվածքը դիտարկում է առողջապահական տեսանկյունից՝ երկու ցուցանիշների

[2] 2020-ից ի վեր կատարված բոլոր վերլուծությունները հասանելի են «Լույս» հիմնադրամի պաշտոնական կայքում՝ https://www.luys.am/index.php?m=publications...:

համադրման միջոցով՝ *«Երկու սեռերի նորածինների թվաքանակների հարաբերակցություն»* և *«Առողջ կյանքի տևողություն»* (որպես կանանց և տղամարդկանց՝ առողջ ապրելու միջին տարիների քանակական հարաբերակցություն):

Քաղաքական որոշումների կայացման բարձրագույն օղակներում կանանց և տղամարդկանց միջև անհավասարությունը գնահատվում է ***«Քաղաքական մասնակցություն»*** ենթաինդեքսով, որի հաշվարկման համար օգտագործվում են երեք ցուցիչներ՝ *«Կանայք խորհրդարանում»*, *«Կանայք կառավարությունում»* և *«Պետության ղեկավարի պաշտոնում վերջին հիսուն տարում կանանց և տղամարդկանց կողմից պաշտոնավարելու տարիների հարաբերակցությունը»*:

ՀԳԱ ինդեքսը հաշվարկվում է խստորեն առաջնորդվելով հետևյալ ***երեք սկզբունքներով.***

1. Երկրները դասակարգվում են ոչ թե ըստ զարգացածության մակարդակի, այլ ըստ գենդերային ճեղքվածքի:

2. Երկրները գնահատվում են միայն ելքային ցուցանիշների (ընդհանրական բոլոր երկրների համար) հիման վրա, և դրանք չպետք է կախված լինեն տվյալ երկրի քաղաքական, իրավական, մշակութային կամ սոցիալական առանձնահատկություններից:

3. Երկիրն ինդեքսի առումով առաջընթաց է գրանցում, եթե նվազում է գենդերային ճեղքվածքը (և ոչ թե այն դեպքում, երբ կանայք տղամարդկանցից ավելի նախընտրելի պայմաններում են գտնվում):

ՀԳԱ ինդեքսը հաշվարկվում է չորս քայլով.

Քայլ 1. Բոլոր տվյալները ներկայացվում են «կին/տղամարդ» քանակական հարաբերակցությունների տեսքով:

Քայլ 2. Վերոհիշյալ հարաբերակցություններից յուրաքանչյուրի համար որոշվում է գենդերային հավասարության «նշաձողը», որը գրեթե բոլոր դեպքերում ընդունվում է հավասար 1-ի (միայն երկու հարաբերակցությունների համար այդ «նշաձողը» հավասար չէ 1-ի՝ նորածինների թվաքանակների սեռային հարաբերակցության համար այն 0.944 է, իսկ առողջ կյանքի սպասվող տարիների հարաբերակցության համար՝ 1.06):

Քայլ 3. Հաշվարկվում են չորս ենթաինդեքսները, որոնցից յուրաքանչյուրը դրա հիմքում ընկած ցուցիչների կշռված միջինն է, և որոնց արժեքները 0-ից 1 միջակայքից են, որտեղ 1-ը համապատասխանում է սեռերի միջև լիակատար հավասարությանը, իսկ 0-ն՝ լիակատար անհավասարությանը:

Քայլ 4. Հաշվարկվում է ՀԳԱ ինդեքսը՝ որպես 3-րդ քայլում ստացված ենթաինդեքսների միջին թվաբանական: Բնականաբար, ինչպես և ենթաինդեքսները, ՀԳԱ ինդեքսը նույնպես արժեքներ է ընդունում [0;1] միջակայքից:

Որոշ դեպքերում ՀԳԱ ինդեքսի փոխարեն դիտարկվում է տոկոսային մեծություն՝ դրա 100-պատիկ մեծ արժեքը: Այն կարելի է մեկնաբանել որպես տվյալ երկրի գենդերային անհավասարության հաղթահարման սահման: Այսպես, օրինակ, Հայաստանի 2023թ. 0.721 ինդեքսը նշանակում է, որ մեր երկրում գենդերային անհավասարությունը հաղթահարված է 72.1%-ով: Այսինքն՝ լիակատար գենդերային հավասարության հասնելու համար մնում է հաղթահարել ևս 27.9%:

2. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ստորև ներկայացված են Համաշխարհային գենդերային անհավասարության ինդեքսի միջազգային գնահատումները 2023 թվականի համար:

2.1. Համաշխարհային միտումներն ու արդյունքները

Գենդերային անհավասարության հաղթահարման համաշխարհային միջին մակարդակը 68.5% է, որը գերազանցում է 2022 թվականի ցուցանիշին 0.1 տոկոսային կետով: Ընդ որում, եթե դիտարկվի ոչ թե 146 երկիր, այլ միայն այն 143-ը, որոնք ընդգրկված են եղել նաև նախորդ զեկույցում, ապա ցուցանիշը 68.6% է: Ցուցանիշի նույնպիսի արժեք է ստացվում, եթե դիտարկվեն միայն այն 101 երկրները, որոնց համար ինդեքսը 2006թ. ի վեր մշտապես հաշվարկվել է: Հատկանշական է, որ թեև ոչ մի երկիր չի հասել գենդերային ամբողջական հավասարության, այս տարվա զեկույցում ներառված երկրների 97%-ը փակել է իրենց ճեղքվածքի ավելի քան 60%-ը (2006-ին այդ շեմը հաղթահարել էր երկրների 85%-ը): *Այնուամենայնիվ, համաձայն ՀՏՀ գնահատումների՝ բարելավման տեմպը նվազել է, և դրա պահպանվելու դեպքում համաշխարհային գենդերային ճեղքվածքն ամբողջությամբ փակելու համար աշխարհից կպահանջվի միջին հաշվով 134 տարի (ըստ նախորդ տարվա զեկույցի պահանջվում էր 131 տարի):*

Անցյալ տարվա համեմատ, ավելի մեծ թվով երկրների համար է արձանագրվել ՀԳԱ ինդեքսի բարելավում: Այսպես, երկրների 50.1%-ն ունեցել է ինդեքսի աճ, 6.1%-ի մոտ փոփոխություն չի արձանագրվել, և 43.8%-ի ինդեքսը նվազել է:

ՀԳԱ ինդեքսի ենթաինդեքսներից ամենափոքրը (ամենամեծ ճեղքվածք ունեցողը) շարունակում է մնալ *«Քաղաքական մասնակցությունը»*՝ ընդամենը 22.5%: *ՀՏՀ գնահատումների համաձայն՝ բարելավման ներկայիս տեմպի*

պահպանման պարագայում, կպահանջվի ևս 169 տարի, որպեսզի քաղաքական մասնակցության մասով գենդերային ճեղքվածքն աշխարհում փակվի:

Հաջորդ ամենափոքրը *«Տնտեսական մասնակցության և հնարավորություններ»* ենթաինդեքսն է՝ 60.5%: *ՀՏՀ գնահատումներով աշխարհից կպահանջվի ևս 152 տարի՝ տնտեսական մասնակցության և հնարավորությունների մասով լիակատար հավասարության հասնելու համար:*

***«Կրթության ձեռքբերում»*, և *«Առողջություն և կյանքի տևողություն»* ենթաինդեքսներն ավանդաբար բարձր են:** Առաջինի մասով գենդերային ճեղքվածքը փակված է 94.9%-ով: *Համաձայն ՀՏՀ գնահատումների՝ ներկայիս տեմպերի պահպանման պարագայում այս ճեղքվածքն ամբողջությամբ փակվելու համար կպահանջվի 20 տարի (նախորդ տարվա զեկույցի հաշվարկներով պահանջվում էր 16 տարի):* Երկրորդ ենթաինդեքսը ցույց է տալիս, որ առողջության և կյանքի տևողության առումով գենդերային անհավասարությունը համաշխարհային մակարդակով հաղթահարված է 96.0%-ով:

Զեկույցի վերջին երկու հրատարակություններում ներառված 143 երկրների համեմատությունը ցույց է տալիս, որ՝ ***«Տնտեսական մասնակցության և հնարավորություններ»*** ենթաինդեքսն արձանագրել է 0.6, իսկ ***«Քաղաքական մասնակցություն»*** ենթաինդեքսը՝ 0.4 տոկոսային կետի աճ: ***«Առողջություն և կյանքի տևողություն»*** ենթաինդեքսը նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոխվել: ***«Կրթության ձեռքբերումը»*** միակ ենթաինդեքսն է, որի գծով արձանագրվել է հետընթաց՝ 0.5 տոկոսային կետով:

2.2. Գենդերային անհավասարությունն աշխարհի տարբեր հատվածներում

Գենդերային անհավասարության ինդեքսի հիման վրա կազմված համաշխարհային վարկանիշային աղյուսակն այս տարի ևս, ինչպես 15 տարի շարունակ, գլխավորում է Իսլանդիան՝ 0.935 (93.5%) ինդեքսով: Երկրորդ և երրորդ տեղերը 0.875 ինդեքսով կիսում են Ֆինլանդիան և Նորվեգիան: Այս տարվա զեկույցի համաձայն ևս կանանց և տղամարդկանց միջև հավասարությունը 80 և ավելի տոկոսով հաղթահարել է աշխարհի 9 երկիր: Լավագույն տասնյակում են նաև Նոր Զելանդիան (4-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.835), Շվեդիան (5-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.816), Նիկարագուան (6-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.811), Գերմանիան (7-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.810), Նամիբիան (8-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.805), Իռլանդիան (9-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.802) և Իսպանիան (10-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.797):

Գենդերային հավասարության ամենափոքր ինդեքս ունեցող երկրներն են Չադը (0.576), Պակիստանը (0.570) և Սուդանը (0.568):

2023 թվականի արդյունքներով (ինչպես և նախորդ տարի) ամենաբարձր տարածաշրջանային միջին ինդեքս ունի «Եվրոպա» տարածաշրջանը՝ գենդերային հավասարության 75.0% ցուցանիշով: 2006-ից ի վեր այս տարածաշրջանի միջին ինդեքսը բարելավվել է 6.2 տոկոսային կետով: Լիակատար հավասարության հասնելու համար տարածաշրջանից կպահանջվի ևս 67 տարի: Ընդ որում, չնայած տարածաշրջանի 40 երկրներից 21-ը փակել են իրենց գենդերային ճեղքվածքի ավելի քան 75%-ը, տարածաշրջանային վարկանիշային աղյուսակի առաջին և վերջին հորիզոնականներում գտնվող երկրների (համապատասխանաբար՝ Իսլանդիա և Թուրքիա) ինդեքսների չափազանց մեծ տարբերությունը՝ 29 տոկոսային կետ, խոսում է ներտարածաշրջանային մեծ անհամասեռության մասին:

Երկրորդ տեղը 74.8% ցուցանիշով զբաղեցնում է «Հյուսիսային Ամերիկան», որի տարածաշրջանային միջին ինդեքսը 2006-ից ի վեր աճել է 4.3 տոկոսային կետով:

Երրորդ տեղում «Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազանի երկրներն» են՝ գենդերային հավասարության 74.2% ցուցանիշով: Ի դեպ, այս տարածաշրջանը գրանցել է ինդեքսի գծով 2006-ից ի վեր ամենամեծ առաջընթացը՝ 8.3 տոկոսային կետ: Ի դեպ, այս տարածաշրջանի *«Քաղաքական մասնակցություն»* ենթաինդեքսը (34.0%) երկրորդ ամենամեծն է բոլոր տարածաշրջաններից, իսկ 2006-ից ի վեր այն բարելավել է ավելի քան 22.4 տոկոսային կետով:

Վարկանիշով հաջորդում է «Արևելյան Ասիա և խաղաղօվկիանոսյան երկրներ» տարածաշրջանը (69.2%): Չնայած 2006 թվականից ի վեր գրանցած համեմատաբար շոշափելի (3.1 տոկոսային կետով) դրական տեղաշարժին, նշված ժամանակահատվածում ամենամեծ բարելավում գրանցած երկրների տասնյակում այս տարածաշրջանից ընդամենը երկու երկիր կա՝ Նոր Զելանդիան և Ֆիլիպինները:

«Կենտրոնական Ասիա» տարածաշրջանը գենդերային հավասարության 69.1% ցուցանիշով զբաղեցնում է 5-րդ տեղը: Չնայած վերջին տարում այս ցուցանիշի աննշան նվազմանը, դրա գծով 2006 թվականից ի վեր գրանցվել է 2.3 տոկոսային կետի ընդհանուր բարելավում: Հատկանշական է, որ այս տարածաշրջանի բոլոր յոթ երկրները գենդերային անհավասարությունը հաղթահարել են ավելի քան երկու երրորդով: Ցուցանիշի ամենամեծ և ամենափոքր արժեքների 4.8 տոկոսային կետ տարբերությամբ Կենտրոնական Ասիան 2-րդ ամենահամասեռ տարածաշրջանն է (առաջինը Հյուսիսային

Ամերիկան է, որում ներառված է ընդամենը երկու երկիր՝ ԱՄՆ-ը և Կանադան): Տարածաշրջանի *«Կրթության ձեռքբերում»* ենթաինդեքսն ավանդաբար բարձր է՝ 99.6%: *«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ»* և *«Քաղաքական մասնակցություն»* ենթաինդեքսների առումով տարածաշրջանում 2023 թվականի համեմատ հետընթաց է գրանցվել՝ համապատասխանաբար 0.6 և 1.6 տոկոսային կետով:

Վեցերորդ տեղում «Ենթասահարական Աֆրիկան» է՝ 68.4%-ով: Տարածաշրջանը 2006 թվականից ի վեր գրանցել է 5.6 տոկոսային կետի առաջընթաց: Ուշագրավ է այն հանգամանքը, որ մի կողմից՝ խմբում ներառված երկրների կեսից ավելին ավելի քան 70%-ով փակել է գենդերային ճեղքվածքը, մյուս կողմից՝ առկա է ներտարածաշրջանային մեծ անհամասեռություն. ինդեքսի ամենամեծ և ամենափոքր արժեքների տարբերությունը 22.8 տոկոսային կետ է:

«Հարավային Ասիա» տարածաշրջանը գենդերային հավասարության 63.7% միավորով զբաղեցնում է յոթերորդ տեղը: Այն 2006 թվականից ի վեր ունեցել է 3.9 տոկոսային կետի բարելավում: Տարածաշրջանի յոթ երկրներից վեցը նույնիսկ վարկանիշային աղյուսակի առաջին 100 երկրների թվում չեն:

Ամենացածր տարածաշրջանային միջին ինդեքս ունի «Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկան»՝ 61.7%: Այնուամենայնիվ, ինչպես և մնացած բոլոր տարածաշրջանները, այն նույնպես 2006 թվականից ի վեր բավական շոշափելի դրական տեղաշարժ է արձանագրել՝ ընդհանուր առմամբ 3.9 տոկոսային կետով:

3. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի գենդերային անհավասարության 2023թ. ինդեքսը 0.721 է, և 146 երկրներ ներառող վարկանիշային աղյուսակում մեր երկիրը 64-րդն է (Գծապատկեր 1): **Հայաստանը 143 երկրների[3] թվում այն 8 երկրներից է, որի ինդեքսը նախորդ տարվա համեմատ չի փոխվել:** Չնայած դրան, վարկանիշային աղյուսակում արձանագրվել է դիրքի նահանջ՝ 3 հորիզոնականով:

Գծապատկեր 1. Գենդերային անհավասարության ինդեքսը Հայաստանում և ՀՀ դիրքն ըստ ինդեքսի, 2007-2023թթ.



Գենդերային ճեղքվածքի կրճատման դինամիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանում 2010-2014թթ. գենդերային անհավասարության խորացման շրջափուլից հետո ինդեքսը մինչև 2022 թվականը շարունակաբար աճել է (բացառությամբ 2020 թվականի), և, այս իմաստով, 2023-ին աճի դադարը մտահոգիչ է:

Գենդերային անհավասարության ինդեքսով Հայաստանը 3.6 տոկոսային կետով գերազանցում է համաշխարհային միջինին (Գծապատկեր 2):

[3] 3 երկիր անցյալ տարվա զեկույցում ընդգրկված չեն եղել, այդ իսկ պատճառով համեմատության համար դիտարկվել է միայն 143 երկիր:

Գծապատկեր 2. ՀՀ գենդերային անհավասարության ինդեքսը/ենթաինդեքսները և աշխարհի միջին գնահատականները, 2023 թվական



2023թ. արդյունքներով Հայաստանի երեք ենթաինդեքսներ՝ ***«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ», «Կրթության ձեռքբերում» և «Քաղաքական մասնակցություն»,*** բարձր են աշխարհի միջին գնահատականներից: Այդ ենթաինդեքսներից առաջինի մասով Հայաստանը գենդերային անհավասարությունը հաղթահարել է 70.7%-ով (ենթաինդեքսի համաշխարհային միջինը 60.5% է): Երկրորդի 99.1% արժեքը 4.2 տոկոսային կետով գերազանցում է աշխարհի միջին ցուցանիշը: Վերջին ենթաինդեքսի արժեքը 22.7% է և աշխարհի միջին ցուցանիշին գերազանցում է 0.2 տոկոսային կետով:

Հայաստանի ***«Առողջություն և կյանքի տևողություն»*** ենթաինդեքսը 2015-ից ի վեր շարունակական աճ է գրանցում: 2023թ. ենթաինդեքսը ցույց է տալիս, որ Հայաստանում այս առումով գենդերային անհավասարությունը հաղթահարվել է 95.8%-ով, ինչն աշխարհի միջին ցուցանիշից պակաս է 0.2 տոկոսային կետով:

Աղյուսակ 1-ում առավել ամբողջական տեղեկատվություն է ներկայացված Հայաստանում գենդերային անհավասարության հաղթահարման գործընթացի վերաբերյալ:

Աղյուսակ 1. Հայաստանի գենդերային անհավասարության ենթաինդեքսները և դրանց հաշվարկում օգտագործվող ցուցանիշները, 2022-2023թթ. *)

Ենթաինդեքս • *Ցուցիչ*	Տարի	Դիրք	<< ինդեքս	Համաշխարհ. միջին	Կին	Տղամարդ
Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ	**2022**	**52**	**71.6%**	**60.1%**		
	2023	**65**	**70.7%**	**60.5%**		
• *Աշխատուժի մասնակցության մակարդակ*	2022	26	87.4%		62.8%	71.4%
	2023	30	87.4%		62.8%	71.4%
• *Միատեսակ աշխատանքների վարձատրությունների հավասարություն, 1-7 (լավագույն)*	2022	35	70.8%			
	2023	45	69.4%			
• *Վաստակած եկամուտ, ԱՄՆ դոլար*	2022	83	62.7%		11,200	17,860
	2023	87	60.7%		12,440	20,480
• *Օրենսդիր համակարգում, բարձրաստիճան և ղեկավար պաշտոններում զբաղվածություն*	2022	93	42.2%		29.7%	70.3%
	2023	94	42.2%		29.7%	70.3%
• *Մասնագիտական և տեխնիկական աշխատանքներում զբաղվածություն*	2022	1	100%		58.9%	41.1%
	2023	1	100%		58.9%	41.1%
Կրթության ձեռքբերում	**2022**	**35**	**99.9%**	**95.2%**		
	2023	**83**	**99.1%**	**94.9%**		
• *Գրագիտության մակարդակ*	2022	57	99.9%			
	2023	58	99.9%			
• *Տարրական կրթական համակարգում ներգրավվածություն*	2022	75	99.8%		89.3%	89.4%
	2023	108	98.2%		89.8%	91.5%
• *Միջնակարգ կրթական համակարգում ներգրավվածություն*	2022	1	100%		90.3%	87.7%
	2023	1	100%		96.9%	96.9%
• *Բարձրագույն կրթական համակարգում ներգրավվածություն*	2022	1	100%		66.3%	46.0%
	2023	1	100%		68.3%	51.6%
Առողջություն և կյանքի տևողություն	**2022**	**139**	**95.5%**	**96.0%**		
	2023	**138**	**95.8%**	**96.0%**		
• *Նորածինների հարաբերակցություն ըստ սեռի*	2022	143	90.9%			
	2023	143	91.3%			
• *Առողջ կյանքի տևողության տարիներ*	2022	1	106.0%			
	2023	1	106.0%			
Քաղաքական մասնակցություն	**2022**	**71**	**21.5%**	**22.1%**		
	2023	**70**	**22.7%**	**22.5%**		
• *Կանայք խորհրդարանում*	2022	38	55.0%		35.5%	64.5%
	2023	38	57.5%		36.5%	63.5%
• *Կանայք կառավարությունում*	2022	98	18.2%		15.4%	84.6%
	2023	98	20.0%		16.7%	83.3%
• *Պետության կին/տղամարդ ղեկավարների իշխանության տարիներ (վերջին 50 տարիների կտրվածքով)*	2022	80	0.0%		0	50
	2023	80	0.0%		0	50

**) 2023թ. ցուցանիշի արժեքը նշված է կանաչ գույնով, եթե 2022-ի համեմատ գրանցվել է բարելավում, կարմիրով՝ վատթարացման դեպքում և դեղինով, եթե այն չի փոխվել:*

Աղյուսակից երևում է, որ **2022-ի համեմատ 2023-ին ցուցանիշների մեծ մասի առումով բարելավում չի գրանցվել:**

«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ» ենթաինդեքսի արժեքը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.9 տոկոսային կետով, իսկ դրա գծով վարկանիշային դիրքը վատթարացել է 13 հորիզոնականով: Ընդ որում, թե՛ ինդեքսի և թե՛ վարկանիշային դիրքի շոշափելի վատթարացում է արձանագրվել «*Վաստակած եկամուտ*» և *«Միատեսակ աշխատանքների վարձատրությունների հավասարություն»* ցուցիչների գծով՝ համապատասխանաբար 2.0 տոկոսային կետ (վարկանիշային 4 հորիզոնական) և 1.4 տոկոսային կետ (վարկանիշային 10 հորիզոնական):

Հայաստանի ***«Կրթության ձեռքբերում»*** ենթաինդեքսը նվազել է 0.8 տոկոսային կետով և կազմել 99.1%: Առաջին հայացքից կարող է թվալ, որ նվազումն այնքան էլ մեծ չէ: Իրականում, սակայն, դա այս ենթաինդեքսի համար բավական լուրջ վատթարացում է համարվում: **Պատահական չէ, որ այն հանգեցրել է ենթաինդեքսի գծով վարկանիշային դիրքի միանգամից 48 հորիզոնականով նահանջի:** Բանն այն է, որ երկրների մեծ մասում այս ենթաինդեքսն ավանդաբար բարձր է (88 երկրի համար այն 99 և ավելի տոկոս է), իսկ ենթաինդեքսի կտրուկ փոփոխություններ սովորաբար չեն լինում: ***«Կրթության ձեռքբերում»*** ենթաինդեքսի գծով նահանջի պատճառը տարրական կրթական համակարգում ներգրավվածության ցուցիչի նվազումն է՝ 99.8%-ից մինչև 98.2%, ինչի պատճառով մեր երկրի դիրքն այս ցուցիչի գծով վատթարացել է 33 հորիզոնականով: Ցուցիչը հաշվարկվում է որպես աղջիկ և տղա աշակերտների տոկոսային ներգրավվածությունների հարաբերություն: Ցուցիչը նախորդ տարվա համեմատ նվազել է, քանի որ տղաների տոկոսային ներգրավվածության աճը գերազանցել է աղջիկների տոկոսային ներգրավվածության աճին:

Բացի այդ, չափազանց մտահոգիչ է նաև այս ենթաինդեքսի երկու տարի անընդմեջ նվազումը: **Ընդ որում, Հայաստանի այս ենթաինդեքսը բոլոր 17 տարիներից (առաջին՝ 2006թ. զեկույցում Հայաստանը ներառված չի եղել) ամենացածրն է: Ի դեպ, անցած 17 տարիներից 7-ի համար (դրանցից 5-ն անընդմեջ՝ 2012-2016 թվականներին) *«Կրթության ձեռքբերում»* ենթաինդեքսի մասով Հայաստանն ունեցել է 100%-անոց արդյունք: Դիտարկվող ժամանակահատվածից ևս 7 տարիների համար ենթաինդեքսը 99.9% է եղել: Միայն երկու տարիներին՝ 2020 և 2021 թվականներին է այն մի փոքր պակաս եղել՝ 99.8%:**

Կրթության ոլորտի բացասական զարգացումները, թերևս, վկայում են այն մասին, որ գործող իշխանությունների այս ոլորտում վարած քաղաքականությունը հակառակ՝ բացասական ազդեցություն է գրանցում կրթության ասպարեզում խորհրդային ժամանակներից փոխանցված ժառանգության վրա:

2023-ին ***«Առողջություն և կյանքի տևողություն»*** ենթաինդեքսը նախորդ տարվա համեմատ բարելավվել է 0.3 տոկոսային կետով և կազմել 96.0% (ինչպես և նախորդ տարի, բարելավումը բացառապես պայմանավորված է *«Նորածինների հարաբերակցություն ըստ սեռի»* ցուցանիշի աճով):

Քաղաքական մասնակցության մասով գենդերային անհավասարության հաղթահարման առումով Հայաստանը 2023 թվականին առաջընթաց է գրանցել՝ 2022-ի համեմատ ***«Քաղաքական մասնակցություն»*** ենթաինդեքսն աճել է 0.012-ով: Ի դեպ, 2022-ին այդ աճը շատ ավելի մեծ էր՝ 0.045 միավոր, և բացառապես պայմանավորված էր երկու կին նախարարների նշանակմամբ:

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Զեկույցում Հայաստանը ներառված է «Կենտրոնական Ասիա» տարածաշրջանում: Հաշվետվության այս մասը նվիրված է Հայաստանի տարածաշրջանային, ինչպես նաև սահմանակից երկրների հետ համեմատական վերլուծությանը:

Աղյուսակ 2. ՀԳԱ ինդեքսը Կենտրոնական Ասիայի երկրներում, 2022-2023թթ.

Երկիր	2022 թվական**)			2023 թվական		
	Դիրքը տարածաշրջանում	Դիրքն աշխարհում	Ինդեքս, %	Դիրքը տարածաշրջանում	Դիրքն աշխարհում	Ինդեքս, %
Հայաստան	***3***	***61***	***72.1***	***1***	***64***	***72.1***
Վրաստան	6	76	70.8	2	69	71.6
Ղազախստան	4	62	72.1	3	76	71.0
Ղրղզստան	7	84	70.0	4	90	70.0
Ադրբեջան	8	97	69.2	5	103	68.5
Ուզբեկստան	-	-	-	6	108	68.1
Տաջիկստան	9	111	67.2	7	112	67.3

***) 2022թ. խումբը կոչվում էր «Եվրասիա և Կենտրոնական Ասիա»: Խմբում ներառված էին նաև Մոլդովան, Բելառուսը, Ուկրաինան և Թուրքիան, իսկ Ուզբեկստանը նախորդ տարվա զեկույցում ընդգրկված չի եղել:*

Ավելի մեծ ՀԳԱ ինդեքս ունեցող Մոլդովային և Բելառուսին այլ տարածաշրջանային խումբ տեղափոխելու հետևանքով Հայաստանը դարձել է այս խմբի առաջատարը:

ՀԳԱ ինդեքսով և աշխարհում զբաղեցրած դիրքով Հայաստանը Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ երկրներից[4] զիջում է միայն Բելառուսին, որը գենդերային անհավասարությունը հաղթահարել է 73.3%-ով և աշխարհում 55-րդն է:

Զեկույցում ներառված ԵԱՏՄ երկրներից ոչ մեկի ՀԳԱ ինդեքսը չի աճել, իսկ նրանց բոլորի վարկանիշային դիրքը վատթարացել է: Բելառուսի և Ղազախստանի դեպքում վատթարացել են թե՛ ինդեքսը, թե՛ վարկանիշային դիրքը՝ համապատասխանաբար՝ 1.9 և 1.1 տոկոսային կետով կամ 14-ական հորիզոնականով: Ղրղզստանը վարկանիշային աղյուսակում նահանջել է 6 հորիզոնականով, իսկ երկրի ՀԳԱ ինդեքսը չի փոխվել:

Աղյուսակ 3-ում ներկայացված են գենդերային անհավասարության ինդեքսը և ենթաինդեքսները Հայաստանում և սահմանակից երկրներում:

Աղյուսակ 3. ՀԳԱ ինդեքսը և ենթաինդեքսները Հայաստանում և հարևան երկրներում, 2023 թվական

Ցուցանիշ / Երկիր		*Հայաստան*	Վրաստան	Ադրբեջան	Թուրքիա	Իրան
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ	**Ինդեքս, %**	***72.1***	**71.6**	**68.5**	**64.5**	**57.5**
	Դիրք	***64***	**69**	**103**	**127**	**143**
• Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ	Ինդեքս, %	*70.7*	72.0	75.0	50.7	34.3
	Դիրք	*65*	54	31	133	144
• Կրթության ձեռքբերում	Ինդեքս, %	*99.1*	99.1	98.5	98.7	97.7
	Դիրք	*83*	85	94	90	102
• Առողջություն և կյանքի տևողություն	Ինդեքս, %	*95.8*	97.4	93.8	96.6	96.4
	Դիրք	*138*	54	146	98	116
• Քաղաքական մասնակցություն	Ինդեքս, %	*22.7*	17.9	6.8	11.8	3.1
	Դիրք	*70*	88	133	114	143

[4] Ռուսաստանի Դաշնությունը «Համաշխարհային գենդերային անհավասարության զեկույց - 2024»-ում ևս (ինչպես և նախորդ տարի) ներառված չէ:

Աղյուսակից երևում է, որ 2023 թվականի արդյունքներով Հայաստանը գենդերային անհավասարության ինդեքսով գերազանցում է բոլոր հարևան երկրներին: Ընդ որում, Հայաստանը միանձնյա առաջատար է միայն ***«Քաղաքական մասնակցություն»*** ենթաինդեքսի գծով, **այսինքն՝ միայն այս ենթաինդեքսի գծով առավելության հաշվին է, որ Հայաստանը բոլոր հարևաններից ավելի մեծ ինդեքս ունի:**

Հայաստանին հաջորդում է Վրաստանը՝ 71.6% գենդերային հավասարությամբ և համաշխարհային վարկանիշային աղյուսակում 69-րդ հորիզոնականով: Երրորդ տեղում Ադրբեջանն է (68.5%, 103-րդ հորիզոնական), որին հաջորդում է Թուրքիան (64.5%, 127-րդ հորիզոնական): Հետնապահը Իրանն է (57.5%, 143-րդ հորիզոնական):

Հարկ է նշել, որ ***«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ»*** ենթաինդեքսով Հայաստանը հարևաններից զիջում է Ադրբեջանին և Վրաստանին (համապատասխանաբար 4.3 և 1.3 տոկոսային կետով): ***«Կրթության ձեռքբերում»*** ենթաինդեքսի գծով «երկիշխանություն» է՝ Հայաստանն ու Վրաստանն ունեն միևնույն 99.1% ենթաինդեքսը: ***«Առողջություն և կյանքի տևողություն»*** ենթաինդեքսով մեր երկիրն առաջ է միայն Ադրբեջանից, որը ենթաինդեքսի վարկանիշային աղյուսակի վերջին 146-րդ հորիզոնականում է, իսկ Հայաստանը՝ 138-րդում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով նշենք.

- 2023 թվականին գենդերային անհավասարության հաղթահարման համաշխարհային միջին մակարդակը 68.5% (0.685) է, որը 0.1 տոկոսային կետով ավելի է 2022-ի ցուցանիշից: Անցած 18 տարիների բարելավման միջին տեմպերը պահպանվելու դեպքում համաշխարհային գենդերային ճեղքվածքն ամբողջությամբ փակելու համար միջին հաշվով կպահանջվի 134 տարի:

- Գենդերային անհավասարության հաղթահարման ամենաբարձր արդյունքն այս տարի ևս պատկանում է Իսլանդիային, որի ՀԳԱ ինդեքսը 0.935 (93.5%) է: Ամենամեծ գենդերային անհավասարությունն ունի Սուդանը, որի ինդեքսը 0.568 (56.8%) է:

- Հայաստանի 2023թ. գենդերային անհավասարության ինդեքսը՝ 72.1%, նախորդ տարվա համեմատ չի փոփոխվել, սակայն վարկանիշային աղյուսակում մեր երկրի դիրքը վատթարացել է 3 հորիզոնականով (64-րդ՝ 2022-ի 61-րդի դիմաց): Հաշվի առնելով, որ նախորդ տարիներին՝ 2015-ից ի վեր, ինդեքսը շարունակաբար աճել է (բացառությամբ համավարակային 2020 թվականի), 2023-ին արձանագրված «լճացումը» խորհելու տեղիք է տալիս:

- Հայաստանի ինդեքսը գերազանցում է դրա համաշխարհային միջին մակարդակին: Հայաստանի ինդեքսում ներառված չորս ենթաինդեքսներից մեկը՝ *«Առողջություն և կյանքի տևողություն»* ենթաինդեքսը ցածր է դրա համաշխարհային միջին մակարդակից:

- **Հայաստանը *«Կրթության ձեռքբերում»* ենթաինդեքսով պատմական «հակառեկորդ» է արձանագրել՝ դրա այս տարվա արժեքը բոլոր 17 տարիներից ամենացածրն է: Ի դեպ, Հայաստանում նախորդ տարվա համեմատ 2023թ. գրանցվել է այս ենթաինդեքսի 0.8 տոկոսային կետով նվազում, ինչն այս ենթաինդեքսի համար շատ կտրուկ փոփոխություն է համարվում. պատահական չէ, որ դրա պատճառով այս ենթաինդեքսի գծով վարկանիշային դիրքը վատթարացել է միանգամից 48 հորիզոնականով: Նվազման պատճառը տարրական կրթական համակարգում ներգրավվածության ցուցիչի գծով արձանագրված նահանջն է. այն 2022-ի 99.8%-ի դիմաց կազմել է 98.2%, ինչի հետևանքով Հայաստանն այս ցուցիչի գծով 33 հորիզոնականի անկում է գրանցել**:

Կրթության ոլորտի բացասական զարգացումները, թերևս, վկայում են այն մասին, որ գործող իշխանությունների այս ոլորտում վարած քաղաքականությունը հակառակ՝ բացասական ազդեցություն է գրանցում կրթության ասպարեզում խորհրդային ժամանակներից փոխանցված ժառանգության վրա:

- «Կենտրոնական Ասիա» տարածաշրջանի 7 երկրների շարքում Հայաստանն առաջատարն է, քանի որ այս տարվանից այլ խմբում են ներառվել Մոլդովան և Բելառուսը, որոնց ինդեքսն ավանդաբար ավելի բարձր է:

- ՀԳԱ ինդեքսով և աշխարհում զբաղեցրած դիրքով Հայաստանը Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ՝ Զեկույցում ներառված երկրներից զիջում է միայն Բելառուսին:

- ՀԳԱ 2023թ. ինդեքսով Հայաստանը գերազանցում է սահմանակից երկրներին՝ շնորհիվ ***«Քաղաքական մասնակցություն»*** ենթաինդեքսի, որի գծով Հայաստանն առաջին տեղում է: ***«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ»*** ենթաինդեքսով Հայաստանը հարևաններից զիջում է Ադրբեջանին և Վրաստանին, իսկ ***«Կրթության ձեռքբերում»*** ենթաինդեքսով Վրաստանի հետ միասին առաջատարն է: ***«Առողջություն և կյանքի տևողություն»*** ենթաինդեքսի մասով Հայաստանը, չի զիջում միայն Ադրբեջանին:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման